

լով աստիճանաբար մինչև մեկնութեան հասած էին:

Եկեղեց ուզած նաև հրատարակել Տնօրինին կողմէն՝ Սեպտ 9-ին, կէս օրէն ետքը, ըստ Գաղղացոց ժամ երեքին, ըսուած հետեւալ խօսքը, թէ՝ «Մենք երբէք ձեր կրօնքը չենք ծաղը եւ ոգոք ալ՝ պէտք չէ որ մերինը ծաղը էք, սակայն մենք մեր կրօնքը պիտի բացատրենք» (Էքսորէն) և կուք ալ՝ ձերը բացատրեցէք, և եթէ Սուրբ «Գրոց զասերու ժամանակ ձեր կարծիքին դէմ որան մը ունինք, ըսէք դասատուին, որ պատրաստ պիտի ըլլաց պատասխանելու»:

Գալով երկրորդ կէտին, կըսէք թէ՝ «Մենք մասնաւոր քննութեամբ ստուգած ենք որ այս աստարածայնութիւնը բարեւուն նորուուի մը յառաջ տանելու համար դէտուուի հնարեւու ունիւն սրբական մի է»:

Մենք՝ վարժարանին արտաքին բրոկրամին մէջ նշանակուած նպատակն եղող՝ ամենաբարձր բարյական գասահարակութեան քօղին տակ ծածկուած որոգայթն երեւան հանելու համար էր, որ վերոյիշեալ իրողութիւնները հասարակաց ծանոցինք, և ոչ թէ ինչպէս կըսէք, թագուն նըսպատակ մը յառաջ տանելու համար:

Բայց որովհետեւ Զեր յօդուածին այդ մասը մեր անձնական պատիւը կարառաւորէ, զմեզ ունիւն սրբական կոչելով, կը պահանջենք ամենայն իրաւամբ, որ եթէ այդ ձեր մասնաւոր քննութեան արդիւնքը իրօք ստուգութիւն մէ է, հաշճիք այդ տեղեկութիւնը տուողին անունն ու փաստերը, ինչպէս նաև այդ թագուն նպատակին ի՞նչ րլլաց յայտնել, և եթէ ոչ՝ խոստովանիլ թէ այդ քննութեան արդիւնքն ստուգութիւն չէ, և թէ անզիտութեամբ եղած է այդ անուանակոչութիւնը Աւելորդ է ըսել որ լուութիւնն ու առանց օրինաւոր փաստերու զրուած ո և է բացատրութիւն՝ դատապարտութիւն և փախուստ կենթագրեն:

Երրորդ՝ կըսէք, «մեր ցաւած տեղը սա է որ այս կերպ ուղարկուած ու անդադին վարմունքները՝ մեր ազգը օտար ազգաց առջեւը արատաւորելէ զատ ուրիշ օգտակար արդիւնք մը չին կրնար ու ունենալ»:

Կը յուսանք որ համազուած էք այժմ թէ մեր վարմունքն տղայական և անպատճէ չըլլալով, ազգին ո և է անպատճութիւն չին պատճառ եր, և եթէ մեր ազգը օտար ազգաց առջեւը արատաւորելէ զատ ուրիշ օգտակար արդիւնք մը չին կրնար ու ունենալ»:

«Մի գալութեան մէջ կը ամսաթեամբ համարական անպատճութիւն է, բողոքական Ամերիկացի միսիօնարաց երկը որուն ամեն ամսաթեամբ երուն մէջ Հայ ժողովաւրդը և իւր կրօնքը անպատճուղ յօդուածների պակաս չին Զարմանալի կէտը սա է որ այդ ամսաթեամբ մէջ ստացող ազգայինք զեւ չին հաճած այդպիսի նուաստացուցիչ գրութիւնները թարգմանութեամբ հրատարակել, որոնցմէ մին, որ յիշեալ թերթին Յունիս ամսոյն հրատարակուած տետրին մէջ տեսնուած է, կը յուսանք որ պիտի հրատարակենք, եթէ յաջողինք հատ մը ձեռք անցնել:

Յուսալով, մեծարգոյ Խմբագիր, որ չը պիտի մերժէք մեր արդար խնդիրքը:

Մհամք Զերդ բարեւացակամք
ՅԱԿՈԲ Յ. ՅԱԿՈԲՅԱՆ
ՄԻՋՐԱՆ Ս. ԿԱԲԱՄԱՃԱՎԱՆ
ՀՅՈՒՅՐԵԼ ՊԵՏՐՈՎԻՉ Յօհ. ՀՅՈՒՅՐՈՒՆԻ.

44 25 - Հայոց 1875

Խաչեալութեալ:

Գիտակ, թ. 70, Հոկտ. 20:

ՎԱՍՆ Ս. ՄԵՍՐՈՊԱՅՑ ՅԱՍՏՐԱԽԱՆ:

ԽԱՅՔԵՐԴ-ՌԵՎԱՆ ԸՆԹԱՐԱԿԱՐԱՐ ԱՅԱՍԹԻՐԱՐԻ:

Արդէն յայտնի է մեր ազգայիններին Ահեհափառ Հայուապետի կոնդակելը, որով նորին Ահեհափառութիւնը հրաւիրում է իւր մօստակայ և հետաւոր որդիներին գործակցել իւր հայրենացն ձեռնարկութեանը, այն է Օշականում համազգայնութեան անմահ երախտաւոր Սուրբ Մեսրոպաց վարդապետի և Թարգմանչի հանգստեան կիսակառաց Տաճարը կատարելազործելու:

Կոնդակը ուղղված էր յանուն տեղւցիս Սրբազն Առաջնորդին, որ թէկ ինքնին այստեղ չէր, բայց փութացել էր ծանուցանել իւր ժողովրդիանը հասարակաց Հօր սուրբ կամքը:

Պատարագի ժամանակ բարեկրօն Յովսէփ Աւագ քահանաց Բռնիաթեանց հանդիսաւոր կեր-

պիւ ընթերցաւ ազգախնամ՝ Հայրապետի ազդու կոնդակը և իւր կողմանէ ևս յորդորեց Աստրախանի ժողովուրդին աշխարհիկ եղուով բացայայտելով մասնաւորապէս Նորին Վեհափառութեան սուրբ կամքը։

Ցուսալի է որ Աստրախանու ջերմուանդ ժողովուրդը ուրախութեամբ կ'գործակցի իւր Հայրապետին և իւր յօժարակամ նուիրաբերութեամբ երախտագէտ կը լինի այն անմահ վարդապետին՝ որի կենդանի աղօմիւք ունինք այսօր լեզու և զիբք որի շնորհիւ և քրտնաջան գործակցութեամբ Հայաստանեաց Եկեղեցւոց բնմերը արձագանգումեն Աստուծոյ խօսքը սեփչական լեզուով։

Գովութեան արժանի քահանայի համառօս բանախօսութիւնը ընդ սմին խմբագրութեանդ առաքելով՝ վատահ եմ՝ որ կարժանացուցանէ տպագրութեան և Արարատաց ։ Էլերում։

Վերջացուցանելով մեր փաքը նամակը ի զիմաց մեր զաշսփարակից եղբարց ասում ենք, «Անցցէ Հայոց Հայրապետը՝ որ իւր ազգասիրական հայեցողութեամբ այց ելանում է մեր Հայրենեաց նուիրական աւերականիրին։ Կեցցեն այն ամեն քահանայք, որք իւրեանց Հայրապետի ազգաշնութեան վերաբերեալ հրամանքը կատարելագործելու աշխատում են բանիւ և գործով։»

Քունիաթեանց բարեկրօն քահանայն այս վերջին յատկութիւնը արդարացրել է իւր վերայ շատ արդեամբ և գեռ արդարացուցանելու է ի շնութիւն ազգի և ի փառս իւր անուան։

5.

Դարբեպաշտօն ժողովութեան Առաջնաշնորհ հարցադադար որդէն հայրենեաց։

Վրէստոնէութիւնը տարածման ժամանակ Եւ դարում՝ Հայաստանը ծնաւ իւր մեջը Եւետարանական ընահիր մշակներ, Աահակ Պարթև Մեծին Եւ իրսիսի որդին, և Մեսրոպ՝ առաքինի Վարդան մարդոյ զաւակը, որոնք մի կողմէն կարտասուեին Հայրենեաց իշխանական զօրութիւնը մոլի ու անկրօն Պարսից իշխանաց և տիրապետաց ձեռը ընկնելու

վրայ, և միւս կողմէն արտասուքները կըսրբեին և բարոյական ոյժը կզօրացը նէին, քրտամբք և արտասուօք կցանեին մտաւոր զարգացման սերմերը, և առատ հունձ կպատրաստեին իւրեանց յաջորդաց համար։ Եւ ընտիր մշակները հայրենեաց ցաւը զգալով՝ զիտութեան լուսոյ ծաւալման համար կաշխատեին։ Ուուրբ Աահակ իւր երկրաւոր կեանքը վճարեց Հայաստանումը Բլուր զիւղի մէջ և ամփոփուեց Տարօնոյ Եշարիշատ աւանումը։ Կորան յաջորդելով սուրբ Մեսրոպ, վեցամսեայ ժամանակին զինի՝ հանգեաւի Վարիստոս, սորա երկրաւոր նշխարըը — մարմինը, ոմանք փափառեցին տանել Տարօնումը թաղել, ոմանք ի Պաղմն, և ոմանք ի Վաղարշապատ, բայց ի վերջոյ Վահան Ըմատունին տարաւ իւր Օշական գիւղը մօտ Վաղարշապատին, և անդ ամփոփեց պատուով նորա մարմինը, որ սուրբ Խջիմածնէն Յ ժամու չափ ծանապարհաւ շեռի է, որոյ դամբարանի վերայ շինուեցաւ յետոյ տաճար զեղեցիկ, որը ժամանակի հնութիւնը անխնայ քայքայել է ու աւելել, ինչպէս իմ աչօք տեսած եմ՝ երբ արժանացել էի զնալ համբուրել բազմերախտ սուրբ Մեսրոպ Վարդապետի շերիմը։

«Երբունի Խորինեան սուրբ Վարդապետը՝ որ աշակերտ էր սուրբ Մեսրոպը, սորա կենաց չք'աղ պատկերը կըներկայացնէ մեզ ասելով։» Պահազանց քան ամենը՝ որոնք այն ժամանակ առաքինի անձինք էին, ամբարաւաւանութիւնը և մարդահաճութիւնը նորա վարուց մէջ՝ տեղ չգտան երբէք, այլ «Շեզ և բարեխորհուրդ գոլով՝ ցոյց կտար իրեն բոլորից՝ չնաշխարհիկ սուրութեամբ զարդարուած, պատճառ՝ տեսութենով հրեշտակական էր, մաօք ծննդական, բանինք պայծառ, դործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, և անձանձոյթ ուսուցանող ։»

Աս մեր հայրենի գրոց կատարելագործողն եղաւ և պարապող թարգմանութեանց Վրիսառնէական ուսման կարեռը ութիւնը ստիպեց սորան յօրինել Հայստանի մէջ հայկական լեզուի մատենագրութիւնը, որ քրիստոնէութեան ամենամեծ պարզեներէն մին է մեր ազգի համար, և այս արդիւնքը որ սուրբ Աստիայ և սուրբ Մեսրովեայ ջանից և փաստակոց պառողքը են, որ և քրիստոնէութեան ուսման կարեռը ութիւնէն ծընունդ առած լինելով՝ համարուած է որպէս Սատուածային մատանց գործ, որպէս նուիրական միջոց սրտի ու մասց մըշակութեան, և որպէս հաստատուն անօթ՝ մարդոյս հոգւոյ և լեզուի ճախութիւնները երկար դարեր կրելու և յաւերժացնելու, և թէ ի՞նչպէս կատարուած է մեր լեզուի տառերի պակասութեանց զիւաը՝ կարծեմ շատերդ պատմաբանական բանափառութիւնով իմացած կլինէք:

Ա համբառ Ազգասէր և Հայրենասէր Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տէր Գէորգ, Սատուածային կամօք՝ Ընդհանուր Հայկեան ազգի ընտրութեամբ՝ իւր Հայրապետական գահը ամբանալուց յետոյ, բարեհամեն անձամբ այց առնել, ոչ միայն իւր հովանաւորութեան և անոչութեան յանձնուած բանաւոր հօտերին ի բազում տեղիս, որպէս նաև Ոտուաստանու քաղաքներումը, այլ և Հայտատանու ոմանց նշանաւոր Եկեղեցեաց և վանօրելից:

որոնք Հայկագեան հնութեան և պարձանաց արձանները էին, ինչպէս այժմ կարդացած Հայրապետական կոնդակի մէջ պարունակեալ բանից երևում է, որ սուրբ Մեսրովեայ ազգապարծան թարգմանչի Հայոց գամբարանին ևս այց առնելով՝ աեսէլ է այն եկեղեցին՝ որ իւր ծոցումը պահպանած է անզին գանձը — սուրբ Մեսրովեայ ոսկերքը, կիսակործան և ողբալի գրութեան մէջ, սուրբ պարտաւորութիւն է համարել ի պատիւոսկերաց սրբոյն՝ տալ նորոգել և կանգնեցնել այն տաճարը, որ արդարեւ կկարսոտի ամենայն ազգասէր ու հայրենասէր անձի օժանդակութեան, ընդ ձեռն գեր. Որբազան Առաջնորդի Սատրախանայ յորդորում է զՁեզ, որ այն սուրբ տաճարը վերանորոգ կատարելագործելու համար բարեհամեն կամաւոր տրօք նպաստել, լիայոյս գոլով՝ թէ դուք յետ լսելոյ Հայրապետական հրաւերը՝ և անդեկանալոյ Ճիզնթափ աշխատութեանց և ազգապարծան հոգեւոր վաստակոց սուրբ վարդապետին Մեսրովեայ՝ կատարելագործողի հայկական գրոց և գերիմաստ թարգմանչի ազգիս, չեք լըանալ ձեր յիամին լումայն նուիրել ի նպաստ շնութեան այն տաճարի՝ որոյ մէջ կրարեմադթէ ձեր կենաց համար նշխարք պրոյն Մեսրովեայ:

Ե 4 - Նոյեմբեր 1873 թ.

Առաջնաւոր

Յ. Ա. Թ. Բ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Երարատ ամսագրոյս Էրդ շրջանը մեր Հեցած լինելով, որ է ի Յունվարէ յառաջակայ 1874 ամի, կիրութամք հրաւեր կարդալ մեր Ազգայնոց, որպէս զի ամսագրոյս բաժանորդագրուիլ բարեհամունքներն՝ իւրեանց կամքը յայտնեն Երարատայ Դործակալաց՝ կամ ուղղակի Խմբագրութեանս հանդերձ Հասցէիւքն:

Երարատայ պարունակութեանց ծրագիրն, թերթից քանակութիւնն և բաժանորդագինն անփոփոխ կմնայ: